




Միջոցներ ձեռնարկեք՝ վտարումից խուսափելու համար



Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) վտարման կասեցում



Կանխեք վտարումը չվճարելու պատճառով



Ծառայություններ և ռեսուրսներ



CDC վտարման կասեցում (Ժամկետը լրանում է 2021 թվականի հունիսի 31-ին)

➤ **Հետաձգեք վտարումը վարձավճարը չվճարելու պատճառով**

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնները (CDC) հրաման են արձակել COVID-19-ի տարածումը կանխարգելելու համար: Հրամանը և Հրամանի երկարաձգումը ժամանակավորապես կասեցնում են վտարումները վարձավճարը չվճարելու համար 2020 թ. սեպտեմբերի 4-ից մինչև 2021 թ. հունիսի 31-ն, այնքանով, որքանով դրա կիրառումը չի արգելվում դաշնային դատարանի վճռով: Այն դեպքում, երբ դա կիրառվում է, CDC-ի վտարման պաշտպանությունը կարող է հետաձգել վտարումը վարձավճարը չվճարելու համար, ԲՄՅՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎՏՈՄԱՏ ՉԻ: Որպեսզի իմանաք, թե արդյոք վտարման պաշտպանության իրավունք ունեք, ծանոթացեք CDC հռչակագրին և դիտեք ստորև ներկայացված տեսանյութը՝

- ✓ **Անգլերեն հռչակագիր՝** https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/downloads/EvictionDeclare_d508.pdf
- ✓ **Թարգմանված** հռչակագիրը մատչելի է ամհարերեն (አማርኛ), Հայիթիի կրեոլերեն (Kreyòl Ayisyen), հինդի (हिंदी), ռուսերեն (Русский), սոմալիերեն (Soomaali), իսպաներեն (Español), ավանդական չինարեն (簡體字) լեզուներով https://www.hud.gov/program_offices/public_indian_housing/covid_19_resources/rdf_other_languages
- ✓ **Տեսանյութ, որը կօգնի հասկանալ, արդյոք իրավասու եք՝** <https://www.youtube.com/watch?v=oODmNuXazqg>

Եթե CDC-ի վտարման պաշտպանության իրավասություն ունեք, դուք պետք է կարողաք և ստորագրեք Հռչակագիրը և այն հանձնեք ձեր Հանրային բնակարանային գործակալություններին (PHA) (եթե բնակվում եք հանրային տներում) կամ տանտիրոջը (եթե Վաուչերի մասնակից եք): Դա կարող էք անել փոստով, էլ. փոստով, ֆաքսով կամ անձամբ: Ձեր գրառումների համար պահեք Հռչակագրի պատճենը:

➤ **CDC-ի վտարման կասեցումը չի վերացնում վարձավճարը**

- ✓ Դաշնային օրենքների շնորհիվ, PHA-ները չեն կարող ներել չվճարված վարձավճարը:
- ✓ Եթե CDC-ի վտարման կասեցման իրավունք ունեք, հիշեք, որ վարձավճարը դեռ պետք է վճարվի, և վարձավճարների հետ կապված ցանկացած մեծ գումար կշարունակվի կուտակվել, եթե չվճարվի:
- ✓ **Շարունակեք կարդալ՝** պարզելու համար, թե ինչ ռեսուրսներ են մատչելի ձեզ համար 2021 թվականի հունիսի 30-ից հետո վտարումը կանխելու համար:

➤ **Նրանց համար, ովքեր ներկայումս իրավասու են CDC-ի վտարման պաշտպանության համար. փոփոխություններ՝ սկսած 2021 թ. օգոստոսի 1-ից.**

- ✓ Քանի դեռ պետական կամ տեղական օրենսդրությամբ ուժի մեջ չմտնի վտարման ավելի երկար մորատորիումը, ձեր PHA-ն կամ տանտերը կարող է վտարել ձեզ, եթե դուք չեք վճարել ձեր վարձավճարը կամ մարելու նոր պայմանագիր չեք կնքել, եթե տանտիրոջ կամ PHA-ի կողմից առաջարկվել է մարման նոր պայմանագիր:
- ✓ **Դաշնային օրենսդրությունը վարձավճարը չվճարելու համար պահանջում է 30-օրյա վտարման ծանուցում**, սակայն պետական կամ տեղական օրենսդրությամբ կարող է պահանջվել ծանուցման ավելի երկար ժամկետ:





Կանխեք վտարումը վարձավճարը չվճարելու պատճառով. ձեռնարկեք այս գործողությունները

- **Վերահաստատեք ձեր եկամուտը:** Եթե ունեցել եք եկամտի նվազում կամ հանգամանքների փոփոխություն, խնդրեք ձեր PHA-ին վերահաստատել ձեր եկամուտը:
 - ✓ PHA-ն կվերանայի ձեր ընթացիկ եկամուտը և կթարմացնի ձեր վարձավճարը՝ փոփոխությունն արտացոլելու համար:
 - ✓ **Խորհուրդ** Եթե եկամտի փոփոխության մասին անհապաղ չեք զեկուցել, PHA-ին հարցրեք վարձավճարների հետագա ճշգրտման վերաբերյալ իրենց քաղաքականության մասին (ոմանք կարող են թույլ տալ դրանք, ոմանք՝ ոչ):
 - ✓ Եթե ֆինանսական դժվարություններ եք ունեցել, հարցրեք PHA-ին, թե արդյոք ունեք նվազագույն վարձավճարից ազատվելու իրավունք:
- **Միանվագ վճարում:** Վարձավճարը կարող եք միանվագ վճարել մինչև 2021 թ. հուլիսի 31-ը:
 - ✓ **Խորհուրդ** Խթանման վճարները, \$300/շաբաթական կամ «Լրացուցիչ» COVID գործազրկության նպաստը, եկամտահարկի վերադարձված գումարները և երեխայի հարկի վարկի վճարումները չեն ներառվել ձեր տարեկան եկամտի հաշվարկի մեջ և կարող են օգտագործվել որպես ռեսուրս ձեր չվճարված վարձավճարը մարելու համար:
 - ✓ Եթե խթանման վճար չեք ստացել, այցելեք այս կայք՝ ձեր վճարման կարգավիճակը ստուգելու և պարզ ձև լրացնելու համար՝ <https://www.irs.gov/coronavirus/get-my-payment>:
- **Վարձակալության աջակցության արտակարգ ծրագիր (ERAP):** Եթե դուք վարձավճար եք պարտք և վտարման վտանգի տակ եք, կարող եք իրավունք ունենալ ստանալ նոր օգնություն վարձակալության համար: Այս ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է այստեղ՝ <https://home.treasury.gov/policy-issues/cares/emergency-rental-assistance-program>: Իրականացումը և առաջնահերթությունները տարբերվում են ըստ նահանգի/տեղանքի:
- **Տեղական ռեսուրսներ:** Ձեր PHA-ը կարող է իմանալ այլ ռեսուրսների մասին՝ վարձակալության, կոմունալ ծառայությունների և այլ հիմնական կարիքների հարցում օգնելու համար:
 - ✓ Զանգահարեք 211 կամ այցելեք 211.org արտակարգ ֆինանսական օգնության մասին տեղեկանալու համար:
 - ✓ **Շարունակեք կարգալ**՝ իմանալու ձեզ մատչելի ռեսուրսների մասին:
- **Մարումների նոր պայմանագիր:** Եթե չեք կարող անհապաղ վճարել ձեր վարձավճարը, հարցրեք ձեր PHA-ին կամ ձեր տանտիրոջը (եթե Վաուչերի մասնակից եք), արդյոք կարող եք **մարումների նոր պայմանագիր** կնքել ցանկացած չվճարված վարձավճարի դիմաց:
 - ✓ Մարումների նոր պայմանագրի կնքումը տեղի կունենա PHA-ի կամ տանտիրոջ հայեցողությամբ:
 - ✓ **Հանրային բնակարանային ֆոնդի մասնակիցներ.** մարումների նոր պայմանագրի պայմանները կներկայացվեն PHA-ի ընդունելության և շարունակական զբաղվածության քաղաքականության (ACOP) և մարումների նոր գրավոր պայմանագրում:
 - ✓ **Վաուչերի մասնակիցներ.** դուք պետք է ուղղակիորեն բանակցեք ձեր տանտիրոջ հետ՝ մարումների նոր պայմանագրի պայմանները որոշելու համար:
- **Վարձակալի իրավունքները և սխալ վտարումները:** Եթե կարծում եք, որ ձեզ անարդարացիորեն վտարում են, դիմեք ձեր տեղական իրավաբանական օգնության կազմակերպությանը կամ սոցիալական ծառայության գործակալություններին:
 - ✓ **Հանրային բնակարանային ֆոնդի մասնակիցներ.** դուք իրավունք ունեք բողոքարկման ընթացակարգի, ինչպես նշված է ձեր վարձակալության պայմանագրում:
 - ✓ **Վաուչերի մասնակիցներ.** Դուք կարող եք նաև կապվել ձեր տեղական PHA-ի հետ:
 - ✓ **Խորհուրդ** Լրացուցիչ տեղեկատվությունը ձեր տարածքում մատչելի իրավաբանական օգնության վերաբերյալ հասանելի է Իրավաբանական ծառայություններ կորպորացիայում (<https://www.lsc.gov/what-legal-aid/find-legal-aid>), ACL Elder Care Locator-ում (Տարեցների խնամքի լոկատոր) <https://eldercare.acl.gov/Public/Index.aspx> և LawHelp.org-ում (<https://www.lawhelp.org/>).¹

¹ HUD-ը (Բնակարանաշինության և քաղաքաշինության նախարարություն) այս հղումները տրամադրում է միայն ձեր տեղեկացվածության համար: HUD-ը չի գնահատել և չի սատարում այս կայքերին:

- **Կապվեք HUD-ի հետ՝ խտրականությունը հաղորդելու համար:** Եթե կարծում եք, որ խտրականության եք ենթարկվել, HUD-ը խրախուսում է ձեզ բողոք ներկայացնել հեռախոսով կամ առցանց:
 - ✓ Չանգահարեք՝ 1-800-669-9777
 - ✓ Առցանց՝ https://www.hud.gov/program_offices/fair_housing_equal_opp/online-complaint



COVID-ի հետ կապված ծառայություններ և ռեսուրսներ, որոնք մատչելի են ձեզ համար

HUD-ը մի քանի ռեսուրս է տրամադրում այս փաստաթղթում՝ միայն ձեր տեղեկացվածության համար: HUD-ը չի գնահատել և չի սատարում այս կայքերին:

- **HUD-ի Տեղեկատվական ռեսուրսների կենտրոն (IRC)**՝ HUD ծրագրերի մասին ընդհանուր տեղեկատվության համար էլ. նամակ հղեք HUD-PIHRC@ArdentInc.com հասցեով կամ զանգահարեք՝ 1.800.955.2232
- **Ազգային թեժ գիծ ընտանեկան բռնության հարցերով՝** <https://www.thehotline.org> կամ 1 (800) 799-7233 կամ TTY 1 (800) 787-3224՝ գաղտնի թեժ գիծ է յուրաքանչյուր ընտանիքի համար, ով ենթարկվում է ընտանեկան բռնության, տեղեկատվություն է փնտրում կամ կասկածի տակ է առնում իր հարաբերությունների անառողջ կողմերը: Եթե չեք կարողանում ապահով խոսել հեռախոսով, ուղարկեք LOVEIS հաղորդագրությունը 1 (866) 331-9474 հեռախոսահամարին կամ այցելեք կայքը՝ առցանց գրույց սկսելու համար:
- **211՝** Չանգահարեք 211 կամ այցելեք 211.org և փնտրեք փոստային ինդեքսով: Մա թեժ գիծ է, որը կարող է ձեզ միացնել արտակարգ իրավիճակների օգնությանն, ինչպիսիք են վարձակալության և կոմունալ ծառայություններ և ձեր համայնքի այլ օժանդակ ծառայություններ: Բոլոր զանգերը գաղտնի են, կարող են իրականացվել անանուն, և զանգահարողները կարող են խնդրել թարգմանչական ծառայություններ 180 լեզուներով:
- **Գործազրկության ապահովագրություն՝** www.usa.gov/unemployment . Պարզեք՝ արդյոք իրավունք ունեք գործազրկության նպաստ ստանալու, և ինչպես դիմել ձեր նահանգում: Նոր դաշնային օրենքները նախատեսում են գործազրկության նպաստներ ինքնազբաղված և խմբային աշխատողների համար, ավելացնում են **շաբաթական նպաստներին լրացուցիչ \$300** և երկարաձգում շաբաթվա նպաստների հասանելիությունը: Բացի այդ, նահանգներին թույլատրվում է տրամադրել գործազրկության նոր նպաստներ, կապված COVID-19-ի հետ, օրինակ՝ երբ անձը թողնում է աշխատանքն՝ վարակվելու կամ վարակի ռիսկի պատճառով կամ ընտանիքի անդամի համար գործատուն ժամանակավորապես դադարեցնում է աշխատանքը COVID-19-ի պատճառով, ինչը նշանակում է, որ աշխատակիցները չեն կարող գնալ աշխատանքի. կամ անձը կարանտինում է, բայց կարանտինն ավարտելուց հետո ակնկալում է վերադառնալ աշխատանքի:
- **Տնտեսական ազդեցության վճարներ (խթանման վճարումներ).** <https://www.irs.gov/coronavirus/get-my-payment> . Պարզեք, արդյոք իրավասու եք նոր տնտեսական ազդեցության վճարների համար մինչև **\$1400** և ինչպես պահանջել ձեր վճարը: Եթե դուք արդեն չեք ստացել խթանիչ վճարների նախորդ փուլերը (առաջին և երկրորդ փուլերը տրվել են 2020 թ. և 2021 թ. հունվարին), այս կայքը պարունակում է նաև տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարող եք ստուգել իրավասության իրավունքը և պահանջել այդ վճարները:
- **Անվճար հարկերի պատրաստում և երեխաների նոր հարկային վարկեր.** <https://www.irs.gov/individuals/free-tax-return-preparation-for-qualifying-taxpayers> . Ստացեք անվճար օգնություն՝ ձեր հարկերը հաշվառելու համար, որոնք տրամադրում են վերապատրաստված կամավորների կողմից կամ որպես էլեկտրոնային ֆայլ անվճար առցանց: Եթե դուք սովորաբար հարկային հայտարարագիր չեք ներկայացնում և ունեք երեխաներ, ապա պետք է մտածեք այս տարի ներկայացնել այն, որպեսզի կարողանաք որակավորվել մանկական հարկի նոր վարկի համար: Նոր դաշնային օրենքը բարձրացրել է երեխաների հարկի վարկերը մինչև \$3000՝ 6 և ավելի տարեկան երեխաների համար, և \$3600՝ 6 տարեկան չլրացած երեխաների համար: **Ամսական վճարումները կարող են ուղարկվել արդեն այս ամառ, բայց միջոցները ստանալու համար ընտանիքները պետք է հարկային հայտարարագիր ներկայացնեն:** 2020 թվականի համար ներկայացնելու վերջնաժամկետը 2021 թվականի մայիսի 17-ն է
- **Աղետների ժամանակ վստահության գիծ.** 1 (800) 985-5990 (զանգահարեք կամ ուղարկեք հաղորդագրություն)՝ ազգային թեժ գիծ է, որը նախատեսված է անհապաղ ճգնաժամային խորհրդատվություն տրամադրել այն մարդկանց համար, ովքեր զգում են ցանկացած աղետի, այդ թվում՝ COVID-19-ի հետ կապված հուզական սթրես:
- **Համայնքի միջոցառումների գործակալություն.** <https://communityactionpartnership.com/find-a-cap/> . Կապվեք համայնքի միջոցառումների տեղական գործակալության հետ՝ պարզելու, թե ինչ ծառայություններ կարող են նրանք առաջարկել, ինչպիսիք են վարձակալության կամ կոմունալ ծառայությունների շտապ վճարման օժանդակությունը:
- **Օգնություն հաշիվների վերաբերյալ.** www.usa.gov/help-with-bills . Իմացեք պետական ծրագրերի մասին, որոնք կօգնեն վճարել հեռախոսային ծառայության, էներգիայի վճարները և այլ ծախսերը:
- **Նպաստների իրավասություն.** www.benefits.gov . Պարզեք, թե կառավարության որ նպաստներն եք իրավասու ստանալ, ինչպիսիք են Գարիբավոր ընտանիքների ժամանակավոր օգնությունը (TANF), սննդի օգնությունը և առողջապահությունը:

- **COVID-19 պատվաստանյութի մասին տեղեկատվություն.**
<https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/vaccines/>. Իմացեք COVID-19 պատվաստանյութի մասին, ներառյալ, թե որքանով է այն արդյունավետ, անվտանգ է արդյոք, և ինչպես կարող եք ստանալ այն:

- **Կրթական ռեսուրսներ.**
<https://belearninghero.org/parentstrong-2/>. Գտեք կրթության ռեսուրսներ և աջակցություն ծնողներին, ովքեր օգնում են իրենց երեխաներին սովորել տանը կամ պարզապես լրացուցիչ կրթական միջոցներ են ուզում իրենց երեխաների համար: